

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.338>

Transformations of Urban Space on the Example of Modern Ijevan

Vladimir Poghosyan

<https://orcid.org/0009-0001-9581-6453>

Lecturer at the Department of Armenian History
and Social Studies of the Ijevan branch of YSU

vladimir.pogosyan@ysu.am

Keywords: Ijevan, urban space, cultural strategy, urban planning, stability of borders, energy crisis, utopian project.

The article is devoted to the study of the process of designing, forming, and transforming the urban space of Ijevan. The influence of the urban environment on social and cultural changes, the main trends, and the priorities of the Ijevan experience of designing urban space are studied. At the present stage of studying urban space, we consider it necessary to consider not only urban planning and architectural problems of urban space, but also to use this industry experience to examine the anthropological phenomenon and formats of the influence of urban space, in which the citizen and the (visually semiotic) environment formed around him are primary. From this point of view, we tried to consider the urbanization process of Ijevan as a factory where unique Soviet urban planning projects were implemented or conceived, the main trend of which was to provide a proportionate, harmonious urban space designed for everyone and everything.

The current panorama of the urban space of Ijevan has been formed since the 1960s, and from a strategic perspective, it was planned that by 2000 the urban population would amount to more than 45 thousand people. Despite the significant urban heritage created during the Soviet era, in the first and second decades of independence, certain parts of the city (especially in the center) began to rebuild and adapt to market relations, resulting in a cultural heritage that is part of the urban space, entertainment facilities, and premises were given over to the public. Studying the experience of transforming the urban space of modern Ijevan provides a model opportunity to observe similar processes in other urban communities of the Republic.

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 338-352.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 21.09.2024

Revised: 06.10.2024

Accepted: 20.11.2024

© The Author(s) 2024

Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով¹

Վլադիմիր Պոգոսյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և
հասարակագիտության ամբիոնի դասախոս

Հիմնաբառեր՝ Իջևան, քաղաքային տարածություն,
մշակութային ռազմավարություն, քաղաքաշինություն,
սահմանային կայունություն, էներգետիկ ճգնաժամ,
ուտոպիստական նախագիծ:

Հոդվածը նվիրված է Իջևանի քաղաքային տարածության ձևավորման, կայացման և փոխակերպման գործընթացի ուսումնասիրությանը: Հետազոտվել է քաղաքային միջավայրի ազդեցությունը հասարակական և մշակութային փոփոխությունների վրա, քաղաքային տարածության ձևավորման իջևանյան փորձառության հիմնական միտումներն ու առաջնահերթությունները: Քաղաքային տարածության ուսումնասիրության ներկա փուլում անհրաժեշտ ենք համարում դիտարկել ոչ միայն քաղաքային տարածության քաղաքաշինական, ճարտարապետական հիմնախնդիրները, այլև այդ ոլորտային փորձառությունն օգտագործել քաղաքային տարածության մարդաբանական ֆենոմենն ու ազդեցության ձևաչափերը ուսումնասիրելու համար, որտեղ առաջնայինը քաղաքաբնական է ու իր շուրջ ձևավորված (վիզուալ-սեմիոտիկ) միջավայրը: Այս տեսանկյունից փորձել ենք Իջևանի քաղաքայնացման գործընթացը դիտարկել որպես աշխատարան, որտեղ իրականություն են դարձել կամ հղացվել խորհրդային քաղաքաշինական յուրօրինակ նախագծեր, որոնց առաջնային միտումն էր ապահովել համաչափ, ներդաշնակ, յուրաքանչյուրի և ընդհանուրի համար նախատեսված քաղաքային տարածություն:

Իջևանի քաղաքային տարածության այժմյան համապատկերը ձևավորվեց 1960-ական թվականներից սկսած, որի ռազմավարական հեռանկարում նախատեսվում էր 2000 թ. ունենալ ավելի քան 45 հազար քաղաքային բնակչություն: Չնայած խորհրդային ժամանակաշրջանում ստեղծված քաղաքաշինական զգալի ժառանգությանը՝ անկախության առաջին և երկրորդ տասնամյակներում քաղաքային առանձին մասերը (հատկապես կենտրոնում) սկսեցին վերակառուցվել և ադապտացվել շուկայական հարաբերություններին, որի արդյունքում քաղաքային տարածության մաս կազմող մշակութային, ժամանցային օբյեկտներն ու տարածքները երկրորդացվեցին: Ժամանակակից Իջևանի քաղաքային տարածության փոխակերպման փորձառության ուսումնասիրությունը մոդելային հնարավորություն է տալիս դիտարկելու նմանօրինակ գործընթացները Հանրապետության քաղաքային այլ համայնքներում:

Преобразования городского пространства на примере современного Иджевана

Владимир Погосян

¹ Հետազոտությունն իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող EU4Culture-ի «Մենք ենք, մեր սարերը» ծրագրի շրջանակներում:

Transformations of Urban Space on the Example of Modern Ijevan
Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով

Преподаватель кафедры истории Армении
и обществознания Иджеванского филиала ЕГУ

Ключевые слова: Иджеван, городское пространство, культурная стратегия, городское планирование, стабильность границ, энергетический кризис, утопический проект.

Статья посвящена исследованию процесса проектирования, становления и преобразования городского пространства Иджевана. Изучено влияние городской среды на социальные и культурные изменения, основные тенденции и приоритеты иджеванского опыта проектирования городского пространства. На современном этапе изучения городского пространства мы считаем необходимым рассматривать не только градостроительные и архитектурные проблемы городского пространства, но также использовать этот отраслевой опыт для изучения антропологического феномена и форматов влияния городского пространства, в котором первичен горожанин и формируемая вокруг него (визуально-семиотическая) среда. С этой точки зрения мы пытались рассматривать процесс урбанизации Иджевана как лабораторию, где были реализованы или задуманы уникальные советские градостроительные проекты, основной тенденцией которых было обеспечение соразмерного, гармоничного городского пространства, предназначенного для каждого и для всех.

Нынешняя панорама городского пространства Иджевана сформировалась с 1960-х годов, и в стратегической перспективе планировалось, что к 2000 году городское население составит более 45 тысяч человек. Несмотря на значительное градостроительное наследие, созданное в советское время, в первое и второе десятилетия независимости отдельные городские районы (особенно в центре) начали перестраиваться и адаптироваться к рыночным отношениям, в результате чего культурно-развлекательные объекты и пространства, являющиеся частью городского пространства, стали второстепенными. Изучение опыта трансформации городского пространства современного Иджевана дает модельную возможность наблюдать аналогичные процессы в других городских общинах Республики.

* * *

Ներածություն: XX դարը բազում և բազմաչափ փոփոխություններ առաջացրեց հասարակական ընդհանուրի և անհատի հարաբերությունների մեջ, որի առանցքը, փոխշփման միջուկը դարձավ քաղաքն ու քաղաքային միջավայրը: Քաղաքն ու քաղաքային միջավայրի տարածակառուցվածքային սահմանները ժամանակի ընթացքում փոխվեցին՝ ընդլայնելով ոչ միայն ֆիզիկական սահմաններն ու բնույթը, այլև ձևավորելով մշակութային, նշանային համակարգեր ու շերտեր: Քաղաքային տարածության կառուցվածքային բազմազանությունը, «մարդաբնակ տարածքների մակրո և միկրո կառուցվածքային միավորների սեմիոտիկ պոլիզոտիզմի գաղափարը» [Лотман, 2000, 679], շատ առումներով կապված էր XX դարի երկրորդ կեսին զիտական և մշակութային ձեռքբերումների հետ:

Քաղաքն ու քաղաքային միջավայրը դարձան խնդիր, որն ուսումնասիրվում է գիտությունների լայն շրջանակի կողմից՝ պատմություն, աշխարհագրություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, հոգեբանություն: Քաղաքը հանդես է գալիս որպես հասարակության զարգացման յուրօրինակ մոդել և լաբորատորիա:

Ժամանակակից քաղաքն ու քաղաքային միջավայրն իրենց մեջ և իրենց շուրջ ստեղծում և գեներացնում են բազմաթիվ խնդիրներ ու ռիսկեր, որոնք ժառանգություն են նախորդ ժամանակաշրջաններից, որոնց լուծումը կամ բերելու է քաղաքային միջավայրի այլափոխմանը, աղճատմանը, կամ նպաստելու է քաղաքային կյանքի որակական բարելավմանն ու քաղաքաբնակների հարմարավետության աճին: Այս հանգամանքով պայմանավորված կարևորում ենք Իջևանի քաղաքային տարածության փոխակերպման ուսումնասիրությունը, քանի որ խորհրդային ժամանակաշրջանի գաղափարական-քաղաքական հայեցակարգային մոտեցումների պայմաններում ձևավորվել է մոդելային քաղաք-արդյունաբերական-վարչական շրջանային կենտրոն, որի ենթակառուցվածքները, տարածքային և տարածական համաչափությունը հարմարեցվել էր խորհրդային ժամանակաշրջանի հասարակական ու պետական պահանջներին:

Ժամանակակից Իջևանը ժառանգել է խորհրդային Իջևանի քաղաքային միջավայրն ու այլանային մոդելը, այն ձևափոխել, ձևախեղել, հարմարեցրել շուկայական հարաբերությունների մրցավազքին համարժեք (ինչպես բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների քաղաքային միջավայրերում), փոխել մշակութային տեքստն ու քաղաքային նշանակությունը: Ընտրված հետազոտության թեման արդիական է, քանի որ աշխատանքի արդյունքում փորձելու ենք հիմնավորել Իջևանի քաղաքային միջավայրի ձևավորման, կայացման և փոխակերպման հեռանկարները ոչ միայն իդեալոգիկ, կադապարային մեկնակետից, այլ փորձել ենք դիտարկել քաղաքն ամբողջի (հանրային) և յուրաքանչյուրի համար:

Հետազոտության նպատակն է համակողմանիորեն, պատմագիտական և միջգիտակարգային աղբյուրագիտական և հետազոտական նյութերի համադրությամբ ուսումնասիրել Իջևանի քաղաքային տարածության փոխակերպման առանձնահատկությունները: Այս նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել Իջևանի քաղաքային տարածության և ենթակառուցվածքների ձևավորման, տարածական համաչափության հիմնական առանձնահատկությունները և դրանց փոխակերպումները ժամանակակից փուլում:
- Կարևորել սահմանային իրավիճակի ազդեցությունը Իջևանի քաղաքային տարածության փոխակերպման գործընթացում:

Գյուղական միջավայրից քաղաքայինի. Իջևանի քաղաքային տարածության սկզբնական փորձառությունը: Խորհրդային Իջևանի քաղաքավերածման գործընթացը բավականին հետաքրքիր միտումների գուգորդման արդյունք էր, որտեղ առաջնակարգ դերակատարում ունեցավ վարչատարածքային կենտրոն լինելու հանգամանքը: Սկսած 1930-ական թվականներից Իջևանում կենտրոնանում են արտադրական և մշակութային նշանակության համալիրները, որոնք արժեքանական ազդեցություն են ունենում գյուղական միջավայրից քաղաքայինի անցման առումով:

Ռուսական կայսրության վերջին տարիներին Իջևանը հանդիսանում էր կոլորիտային գյուղ, բավական մեծաթիվ բնակչությամբ, գործող եկեղեցով և դպրոցով, չկար հստակ հատակագծային

Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով

առանցք, փողոցներն ու բնակելի համալիրները հարմարեցված էին տեղի լանդշաֆտին, իսկ կենտրոնը կազմում էր Սուրբ Սարգիս եկեղեցին: Ըստ էության, գյուղական միջավայրը տարածական առումով ձևավորվել և զարգացել էր «հարգանքի/ակնածանքի վայրի»՝ եկեղեցու շուրջ: Բնական է, որ այսօրինակ տարածական համաչափությունը բերելու էր իջևանաբնակների շրջանում «հարգանքի բոլոր դրսևորումները՝ ահռելիության զգացումն ու հարմարվողականությունը» [Эплард, 2015, 102-103]: Համաձայն հետազոտողների՝ բնավայրի ձևավորման մեկնակետը հանդիսացել է այն տարածությունը, որն ունի «որակական հատկություններ», որոնք ընկալվել են մեր նախնիների կողմից որպես սրբազնային (սակրալ) տեղավայրեր: Ավելին, սակրալ կենտոնն իրենով ձևավորում է մնացյալ տարածական համաչափությունը՝ ճառագայթաձև իր շուրջ պարառելով մնացյալ բնակեցված տարածությունը [Аванесов, 2018, 70-92]:

Խորհրդային առաջին տարիներին Իջևանի գյուղական տարածությունը ենթարկվեց որոշակի փոխակերպումների, որը պայմանավորված էր նոր հասարակական-քաղաքական օրակարգի, սոցիալիստական արժեհամակարգի ներդրմամբ: Կրոնական/սակրալ միջուկը փոխարինվեց սոցիալիստիկոսով, և փոխակերպման ընթացքն առանձնացավ ուշագրավ դրսևորումներով, դպրոցներից հեռացվեցին «փիլոնավորները», իսկ ամենավերջին դրվագը՝ գյուղամիջյան եկեղեցու փոխակերպումն էր ակումբի: Եկեղեցու վերաօգտագործումը միայն իջևանյան դրվագ չէր, 1920-1930-ական թվականներին նմանօրինակ վերաօգտագործման են ենթարկվում Խորհրդային Հայաստանի գյուղական և քաղաքային եկեղեցիները, որը պահանջում էր նաև տարածքի վերախմաստավորման և շենքային պայմանների փոխակերպման խնդիրներ: Ինչպես ցույց են տալիս վերջին շրջանի հետազոտությունները՝ «վերախմաստավորման գործառույթներով պաշտամունքային շենքի վերագործարկումը, իհարկե, ենթադրում էր նրան կրոնական հատկանիշներից՝ խաչից, հաճախ նաև գմբեթից ու զանգակատնից զրկելը» [Աստոնյան, Մուրադյան, 2023, 64]: Հասարակության մեջ կրոնական ներկայության և հոգևորի ու հոգևորականների մերժման դրվագներ նկատելի են 20-ական թվականների մամուլում, որտեղ ոչ միայն քննադատական մոտեցում կա կրոնի, եկեղեցու, հոգևորականի նկատմամբ [Մուքիասյան, 2023, 273-284], այլև այդ մոտեցումը փորձում են դիտարկել նոր իրականությամբ. «Մեր մասսան կարիք չի զգում յեկեղեցու և աղոթքի, նա զբաղված է իր աշխատանքով, և հաճախ կլսես գյուղացու բերանից խոսքեր, վորոնք բնորոշում են նրա ամբողջ հայացքը դեպի կրոն» [Խորհրդային Հայաստան, 30.XII.1923, 3]: «Խորհրդային Հայաստան» թերթի համարներից մեկում կարդում ենք, որ Մելիք գյուղի (Իջևանի շրջան) եկեղեցու վերաօգտագործման նախաձեռնությունը պատկանում է գյուղի բնակչությանը և «եկեղեցին վերածել գյուղխորհրդի գրասենյակի և եկեղեցական ակումբի, նկատի ունենալով, վոր մեծ կարիք են զգում այդպիսիների և յեկեղեցին փակ է մնում: Այդ առթիվ հասարակությունը անհրաժեշտ է գտել կազմել համախոսական, վորը ստորագրված է գյուղի բոլոր ծխերի կողմից» [Խորհրդային Հայաստան, 17.II.1926, 2]: Եկեղեցիների ոչնչացումը կամ վերաօգտագործումը, հոգևորականության հարկադիր կրոնականությունից հրաժարվելը և այլ նմանօրինակ գործընթացներ վկայում են խորհրդային իշխանությունների կողմից վարվող կրոնական մերժողականության քաղաքականության մասին, ինչը հեռանկարում նպատակ ուներ

գաղափարախոսական տեսանկյունից հասարակության համար կոմունիզմից անդին չորդել որևէ այլընտրանք, իսկ այս գործընթացն ավելի ամբողջացնելու և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովելու համար ստեղծվեց որոշակի ինքնակազմակերպման միտում, պետական վերաբերմունք, որը ողջունում էր մելիքգյուղիների օրինակին հետևելը:

1922 թ. հանրապետական թերթում Իջևանը նկարագրված է հետևյալ կերպ. «Իջևանն իրենից մի մեծ գյուղաքաղաք է ներկայացնում, նրա տները մասամբ կուտակված, մասամբ ցրված են և շուտից բարձրանում են դեպի սարը, առանց որևէ կարգի» [Խորհրդային Հայաստան, 14.VI.1922, 1]: Մինչև Հայրենական Մեծ պատերազմի ավարտն Իջևանում չձևավորվեց ուղղաձիգ ու հատակագծված փողոցները, հանրային միջավայրի կենտրոնը ծավալվում էր միակ ակումբի շուրջ, որը ծառայում էր և որպես «նորություններ և գիտելիքներ ձեռք բերելու վայր» [Խորհրդային Հայաստան, 14.VI.1922, 1], և որպես «տեղային աշխատակիցների ուժերով կազմակերպված ներկայացումների» [Խորհրդային Հայաստան, 14.VI.1922, 1] վայր: Նոր գաղափարախոսության ազդեցության ներքո, հանրային-հասարակական գերակայության միջավայրը «հարզանքի/ակնածանքի վայրը» փոխակերպում է «անհանգստության վայրի» (մարդկանց զանգվածային հավաքների վայրի): Իջևանի օրինակով կարող ենք նշել, որ 1920-ական թվականներին ակումբը կարող էր իր պատերի ներքո համախմբել իջևանաբնակների առնվազն մեկ քառորդին: Ըստ խորհրդային շրջանի հուշագիր Մ. Խաչատրյանի՝ Իջևանում «աչքի ընկնող շինությունների չկային: Գյուղի կենտրոնում նրա ամենամեծ շինությունն անցյալ դարի կեսերին հիմնված եկեղեցին՝ «Սուրբ Սարգիսը», մեր գյուղացիք դրան «Ժամ» էին կոչում: 1920-ական թվականներից իշխանությունների կողմից վերածվեց ակումբի՝ իր բեմով, կինոխցիկով և 500-800 տեղանոց՝ դահլիճով» [Խաչատրյան, 1994, 14-15]:

Աճող բնակչության կարիքների սպասարկման համար, բնական է, խորհրդային իշխանությունները փորձեցին գտնել որոշակի լուծումներ: Նշենք, որ 1926-1939 թվականների ընթացքում Իջևանի բնակչությունը ավելացավ 95%-ով [Պողոսյան, Մկրտումյան, 2022, 257], ինչն էլ իր հերթին պահանջարկում էր քաղաքային տարածության բարելավում, այլեթնիկ (հիմնականում ռուս) վերաբնակիչների կյանքի և կեցության պայմանների ապահովման համար: Իջևանում ևս կառուցվեցին անորակ կոմունալ բնակարաններ, որոնք դարձան «1930-ականների ուղիղ և կոպիտ ապրելակերպի արտահայտիչները» [Бойм, 2002, 168]: Բնական է, որ քաղաքային տարածությունների արագ ձևավորմանն ու ընդլայնմանը մեծապես նպաստեց բնակչության շեշտակի աճը, որը հաճախ ստեղծում էր «բնակարանային ճգնաժամ՝ անընդհատ գերազանցելով ժողովրդագրական կանխատեսումներին և հասանելի բնակելի տարածքներին» [Morton, Stuart, 1984; Pallot, Shaw, 1981; Chauncey, 1970]: Այս գործընթացը կրում էր համախորհրդային բնույթ և ցույց էր տալիս հասարակության աշխատանքային ռեսուրսների բաշխվածության պետական իշխանության վարած քաղաքականության միտվածությունը [Глущенко, Кагарлицкого, Куренного, 2012, 46]:

Խորհրդային Իջևանի փոխակերպման գործընթացը հատկապես ակտիվ փուլ մտավ հետպատերազմյան առաջին տարիներին: 1948 թվականի մի խումբ ճարտարապետների (Պ. Թումանյան, Հ. Դավթյան) աշխատասիրությամբ ստեղծվեց Իջևան քաղաքատիպ համայնքի

¹ Հանդիսականների թիվը չափազանցված է. շենքի տարածածավալային չափսերը հաշվի առնելով՝ հնարավոր էր տեղավորել մոտ 200 նստատեղ:

հատակագիծը, որում օրինաչափորեն հաշվարկված էր բաց տարածության վերափոխումը քաղաքային պահանջներին համապատասխան՝ հստակ, ուղղաձիգ փողոցներով, հրապարակներով, հանրային միջավայրն ապահովող գործառնության տարածքներով: Պետք է նշել, որ տվյալ շրջանի քաղաքաշինական մտքում նկատելի էր ճարտարապետական այնպիսի կերպի ձևավորումը, որը պետք է համապատասխաներ հասարակության յուրաքանչյուրի և ընդհանուրի պահանջներին: Այստեղ տեղին է ճարտարապետության տեսաբան Ալլո Ռոսսիի այն մոտեցումը, որ «կոլեկտիվն ու մասնավորը, հանրային ու անհատը փոխազդում և բախվում են քաղաքի ներսում, որը բաղկացած է բազմաթիվ անհատական էակներից, որոնք ձգտում են գտնել իրենց տեղը դրանում, և միևնույն ժամանակ, ընդհանուր տարածությանը համապատասխան իրենց սահմանափակ տարածությունը» (Aldo Rossi, The Architecture of the city):

1948 թ. հատակագծում ճարտարապետական առանցքը դարձավ Շահումյան փողոցը (այժմ՝ Մելիքբեկյան), որը միաժամանակ միավորում էր երեք միմյանց հատվող քաղաքային կարևոր փողոցները, իսկ Աղստևի երկու ափերը միմյանց միավորող կամուրջը ձեռք բերեց կարևոր տրանսպորտային նշանակություն: Տարածքը սկսեց համապատասխանեցվել աճող հասարակության պահանջներին, բարելավվեց հանգստի, ժամանցի միջավայրը, կառուցվեցին ակումբային, հարակումբային, կինոթատրոնային նշանակության շինությունները, որոնք ոճային առումով վերարտադրում էին ավանդական, ազգային ճարտարապետության սկզբունքները՝ պահպանելով սոցիալականության հասանելիության գաղափարը: Էլլարդյան մտահայեցմամբ՝ 1950-ական թվականների վերակառուցման արդյունքում գյուղական միջավայրը վերափոխվեց քաղաքայինի, հայտնվեցին ժամանցային տարածական միավորներ (գրոսայգի, լճափ, գետափնյա փողոց, շատրվաններ, պարահրապարակ, մարզադաշտ, բաց կինոթատրոն, սրճարաններ), որտեղ «անցկացրած ժամանակը և այնտեղ ունեցած փորձառությունները կարող են ստեղծել խորը կապվածություն... (կրթի, ցանկության)» [Ձևարժ, 2015, 58]:

Գյուղական միջավայրի փոխակերպումը քաղաքայինի բավականին բարդ և բազմաչափ գործընթաց է, որի առաջին պլանում միայն ֆիզիկական տարածության ձևավորումն է: Առավել կարևոր է ֆիզիկական տարածքի գործառնականության՝ հանրային-մշակութային ինտեգրումը: Մշակութային նոր հաստատությունների, հանրային տարածքի կիրառականության նոր դրսևորումները պայմանավորում են խորհրդային Իջևանի զարգացման յուրօրինակ ընթացքը: Քաղաքաշինական լուծումների իջևանյան մոդելի շրջանակներում հանրապետական և տեղական իշխանությունների խնդիրն էր ստանալ վարչա-քաղաքական կենտրոնի այնպիսի մոդել, որտեղ համամասնորեն արժևորված կլինեին և գաղափարախոսական արժեքները, և հանրային միջավայրի գաղափարական արժեքների յուրացման տարածքները, և առևտրա-արդյունաբերական համալիրների համաչափ-ներդաշնակ ներկայությունը քաղաքային կյանքում: Համաձայն Յու. Լոտմանի՝ իր տարածության մեջ իրացնելով «տարբեր ազգային, հասարակական, ոճական ծածկագրերի և տեքստերի հանգուցավորում, քաղաքն իրականացնում է տարատեսակ հիբրիդացումներ, վերակողմավորումներ, սեմիոտիկ թարգմանություններ, որոնք այն վերածում են նոր տեղեկատվության հզոր գեներատորի» [Лотман, 1984, 35]: Բնական է, որ խորհրդային գաղափարախոսության տարածման, ամրապնդման քաղաքական մեթոդաբանությունը ոչ միայն

նախատեսում էր հանրային համակարգային վերափոխում, հասարակության մեջ նոր գաղափարական արժեքների սահմանում ու դրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունքի հաստատում: Խորհրդային քաղաքաշինությունն ու քաղաքային տարածքների ձևավորումը ևս նպատակ ունեին ամրապնդելու նոր արժեհամակարգն ու մշակույթը: Խորհրդային քաղաքաշինությունն էլ նպատակ ուներ նոր քաղաքային տարածքները մաքսիմալ և դինամիկ հարմարեցնելու առկա լանդշաֆտին՝ ստանալով «ծավալների իդեալական դասավորության, դրանց երկարության, բարձրության և խտության որոնման հաջողված և ձախողված ձևեր» [Аванесов, Федотова, 2022, 210]:

Փոփոխությունների, քաղաքային տարածության փոխակերպման շղթան իր տրամաբանական հանգրվանին հասավ 1960-ական թվականների սկզբին, երբ ամբողջականացվեց Իջևանի կենտրոնը, կառուցապատվեցին բնակելի և վարչամշակութային շինությունները: Բնական է, որ կենտրոնի, մշակութային առանցքը պետք է կազմեր գաղափարախոսության տեղական կերպարներից մեկը և այս պարագայում իջևանյան թերթի համարում հիշատակվում է. «Օրեցօր փոխվում և գեղեցկանում է մեր քաղաքը: Նրա լայնահուն փողոցների վրա բարձրանում են բնակելի, վարչական բազմահարկ շենքեր ու կենցաղային սպասարկման նոր օբյեկտներ: Կամուրջների մոտ արդեն ձևավորվել է քաղաքի հրապարակներից մեկը: Նրա կենտրոնում դրվել է մայիսյան ապստամբության դեկավարներից մեկի՝ Ենոք Մկրտումյանի հուշարձանը: Նա իր բազալտե պատվանդանից խրոխտ հայացքով նայում է ծաղկող Իջևանին... Հրապարակից սկիզբ է առնում Ենոք Մկրտումյանի անվան փողոցը: Փողոցի երկու կողմերում ձգվում են բազմահարկ 20 գեղեցիկ շենքերի վարդագույն շարքերը» [Էլլարյան, Լենինյան ուղիով, 24.II.1965, 3]: Խորհրդային Իջևանի գաղափարական-մշակութային կրողը հանդես է գալիս հեղափոխական Ենոք Մկրտումյանի կերպարը, որը ոչ միայն անհատ է, հայտնի հեղափոխական գործիչ, որ օրինակ է աճող սերնդի համար, այլ և ենթարկվում է այլացման՝ փողոցի, հրապարակի անվանում, հուշարձան և այլն: Խորհրդային տարիներից անցել է ավելի քան երեսուն տարի, և անկախությանը զուգընթաց Ենոքի հուշարձանը հանվել է, հրապարակը կոչվել Սահմանադրության, փողոցը վերանվանվել Անկախության, բայց մինչ այժմ հասարակության սերնդային համամասնության բոլոր ներկայացուցիչների շրջանում փողոցը շարունակում է անվանվել Ենոք (Ենոքի խաչմերուկ), ինչը մեզ ուղղակիորեն վկայում է, որ վերջինս է քաղաքի մշակութային հիշողության կրողը, որի «հիմնական գործառույթը մշակութային իմաստների կուտակումն ու փոխանցումն է՝ կազմելով քաղաքի հիշողության խորհրդանշական մատրիցան» [Аванесов, Федотова, 2022, 81]:

Իջևանի քաղաքային տեքստի ամբողջացումը: Սկսած 1930-ական թվականներից Իջևանի գյուղական առօրեականությունն ընդհատվում է արդյունաբերության և արդյունաբերական համալիրների մուտքով բնակավայր, սկսվում է երկդիմի պայքար «կուլտնտեսական» և «ինդուստրիալ» իջևանների միջև: Նշվեց Իջևանի բնակչության շեշտակի աճի միտումը, որը պայմանավորված էր ինչպես պետական քաղաքականությամբ, այլ նաև գյուղական բնակչության՝ դեպի զարգացած, կայացած միջավայր տեղափոխվելու ցանկությամբ: Բնական է, որ այս համատեքստում հակադրվում են նախկին՝ «խարխուլ, կիսամութ խրճիթներով» Իջևանի, որտեղ «աշխատավորը թափում էր արյուն ու քրտինք, բայց մնում էր օրվա հացի կարոտ» և «արդյունաբերական խոշոր ձեռնարկություններով՝ հանրապետության հյուսիսարևելյան

Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով

հատվածի արդյունաբերական կենտրոն» Իջևանի ընտանիքը [Գևորգյան, Լենինյան ուղիով, 9.VI.1967, 3]: Խորհրդային քաղաքաշինության առաջընթացը և մոդելային նոր քաղաքների ձևավորման ընթացքը հանգեցրեց ոչ միայն Իջևանի, այլև խորհրդային բոլոր հանրապետություններում քաղաքային կյանքի զարգացմանը: Ընդամենը մեկ տասնամյակում Իջևանում կառուցվում են Շահումյանի, Ենոքի, Մարքսի, և Գետափնյա փողոցները, վերակառուցվում Լենինի, Սվերդլովի և Սյասնիկյանի փողոցները, մշակույթի և հանգստի զբոսայգին [Գևորգյան, Լենինյան ուղիով, 9.VI.1967, 3]:

Սկսած 1930-ական թվականներից արագ թափ ստացավ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը՝ սկզբում փայտամշակման, իսկ արդեն հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ հանրապետական նշանակության: «Իջևանցին երբևէ չէր կարող մտածել այսօրվա գործարանների ու կոմբինատների գոյության մասին, չէր կարող ենթադրել, որ խարխուլ տների փոխարեն կամ անօգտագործելի հողամասերում կկառուցվեն փայտամշակման ու գորգագործական կոմբինատները, զարեջրի գործարանը, մեխանիկական նորոգման ու ավտովերանորոգման արհեստանոցները, որ բնակչության կենցաղային սպասարկումը բարելավելու համար կհիմնվի կենցաղային սպասարկման կոմբինատը և այլն» [Ճաղարյան, Լենինյան ուղիով, 28.XI.1967, 2]: Եթե նախահեղափոխական ժամանակաշրջանում արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ժամանակ նախապատվությունը տրվում էր դրանց գործառնական նշանակությանը, ապա 1930-ականներից սկսած մեծ ուշադրություն սկսեցին դարձնել քաղաքային տարածություն-արդյունաբերական համալիր համամասնությանը, դրանց ինտերիերի լուսավորության պայմաններին, շենքերի ոճային և գեղագիտական նույնականությանն ու ներդաշնակությանը: Չնավորված նոր հատակագծերն ու պլանները նախատեսում էին նաև ռազմավարական զարգացման հեռանկարները, քաղաքային տարածության հնարավորություններն ու առկա պայմաններում լավագույն քաղաքաշինական լուծումները: Այս առումով ևս Իջևանի ճարտարապետական ամբողջության մեջ նկատելի էր ընդհանրական մոտեցումն ու քաղաքատեղային առանձնահատկություններին նախագծային հարմարեցումը: Կարելի է համաձայնել այն համոզման հետ, որ խորհրդային ճարտարապետներն իրենց ընկալեցին որպես նոր իրականության, կենսամիջավայրի «իդեալական մոդելի» ստեղծողներ [Баканов, 2007, 124], որոնք ունակ են ստեղծելու ներդաշնակ, միաձույլ հասարակություն, որն ապրում է ընդհանուր արժեքներով:

Բանական է, որ լինելով չբնակեցված տարածքի վրա բարձրացող քաղաք՝ Իջևանը ներկայանում էր որպես քաղաքաշինության յուրօրինակ փորձարարական լաբորատորիա, որտեղ ճարտարապետական միտքը պետք է հղանար նորարարն ու ավանդականը: Քաղաքային տարածքը պարառող խաչաձև բլուրներն ու բարձունքները, անտառը, գետը, հանրապետական մայրուղին, բնական է, այնպիսի, հանգամանքներն են, որոնք պահանջում են մանրակրկիտ մոտեցում, տարածաչափական հնարավոր լուծումների համադրում: 1960-ականների վերջին վերանայված հատակագիծը սահմանում էր նոր մոտեցումներ՝ «հաջորդական օղակների սկզբունք, խառը կառուցվածքային սիստեմ, որը թույլ կտար շահավետ օգտագործելու թեքությունները» [Զարգարյան, Լենինյան ուղիով, 6.VI.1968, 3]: Նախագծային փոփոխության

արդյունքում 1968 թվականին վերահաստատված հատակագծում սահմանվում էր քաղաքային տարածության տարբեր միջավայրերի համամասնությունը՝ արդյունաբերական և արտադրական ձեռնարկությունների ծավալում դեպի հյուսիս՝ Ադստն գետին զուգադիր, իսկ մշակութա-ժամանցային և վարչական կենտրոնները՝ դեպի հարավ: Նորույթ էր նաև քաղաքային տարածության ընդլայնման հեռանկարը, որը սահմանում էր քաղաքային բնակեցված տարածքից դուրս ժամանցային գոտիների ձևավորում՝ «Սպիտակ ջրի և Կարմիր կամրջի մոտ լճեր, հանգստի և զբոսանքի հետ կապված կառույցների շարք, մարզադաշտեր և այլն» [Զարգարյան, Լենինյան ուղիով, 6.VI.1968, 3]:

Մինևույն ժամանակ վերանայված նախագիծը սահմանում էր ռազմավարական հեռանկարը, ըստ որի 1980 թվականին շրջանի բնակչությունը պետք է գերազանցեր 80 հազարը, իսկ 2000-ին՝ 120 հազարը, ինչը ենթադրել էր տալիս հնարավոր բոլոր քաղաքաշինական և բնակապահովման նորմերի վերանայում և բարելավում: Ուսումնասիրելով նույն ժամանակահատվածի թերթերն ու հնարավոր վիզուալ տարբերակները, նկատում ենք, որ քաղաքի ապագային և քաղաքային տարածության կերպափոխման նկատմամբ տեղական իշխանություններն ունեն խիստ դրապաշտական, ինչու չէ նաև, ուսույթատական մոտեցում, ըստ էության նպատակ ունենալով ստեղծել «խելամիտ և ներդաշնակորեն կազմակերպված միջավայրի մոդելներ, որոնցում մարմնավորվում են հասարակության կողմից ընդունված արժեքները» [Иконников, 2006, 11]: Թղթին հանձնված նախագծերի համաձայն մեզ էր ներկայանալու լիովին այլ Իջևան՝ զարգացած ենթակառուցվածներով, մշակութային, արտադրական, ժամանցային հստակ գոտիավորմամբ: Մելիքբեկյան (նախկին՝ Շահումյան) փողոցը նախատեսվում էր վերածել պուրակի, որի ամբողջ երկարությամբ կգործեին շատրվաններ, գործկոմի շենքին զուգահեռ՝ նախատեսվում էր կառուցել եռահարկ համալիր՝ նախատեսված ճարտարապետական բաժնի համար, որտեղ «տեղ կգտնեն ցուցադրական դահլիճն ու սրճարանը, նախագծողների համար աշխատասենյակները, ֆոտոլաբորատորիան» [Բարայան, Լենինյան ուղիով, 28.XI.1968, 2]: Ուսույթատական էր նաև հանրային միջավայրի, ժամանցի պայմանների ընդլայնման միտումը, որով նախատեսվում էր մերձքաղաքային Մարմարե լճի երեսուն հեկտար տարածքի վրա զարգացնել ջրային սպորտաձևերը, իսկ Չինգիլի ձորում՝ վաթսուն հեկտարի վրա կառուցապատել նոր այգի՝ հազեցած «խաղահրապարակներով, ընթերցասրահներով ու ռեստորանով» [Բարայան, Լենինյան ուղիով, 28.XI.1968, 2], որի հիմնական գործառույթը պետք է լիներ հասարակական հարաբերությունների բյուրեղացումն ու փոխանակումը [Аванесов, Федотова, 2022, 219]:

Պետք է նշել, որ այս նախագծերի մի մասը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով, չիրականացվեց, բայց մինչ այժմ քաղաքի զարգացման պլանը դուրս չի մղվել 1968 թվականի վերանայված հատակագծից, քանի որ քաղաքային կառուցապատման ու բնակչության աճը չհատեց ռազմավարական պլանավորման նիշը: Հետագա տասնամյակներում ևս, որոշ վերանայումների ենթարկվեց վերոնշյալ գլխավոր հատակագիծը, երբեմն ենթարկվելով սրբագրումների և լրացումների: 1980-ական թվականների կեսերին հիմնական աշխատանքն ուղղված էր բնակելի թաղամասերի՝ չորրորդ թաղամասի երկրորդ գծի, Սպանդարյան փողոցի, չորրորդ դպրոցին հարող լանջաբացվածի բնակելի հատվածների շինարարությունը: Շարունակվեց նաև քաղաքային տարածության մշակութա-ժամանցային հարմարեցման աշխատանքները՝ «յուրացվելով գեղարվեստական ինքնատիպ ձևերով» [Զարգարյան, Լենինյան

Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով

ուղիով, 29.XI.1986, 2]: Նախատեսվում էր քաղաքի հյուսիսային մուտքին մոտ՝ Աղստև գետին գուգահեռ կառուցել շատրվաններ և ծառուղիներ, գեղարվեստական լուծում տալ Դենդրոպարկի մուտքին, լճի չորս կողմը ստեղծել հանգստյան գոտի, գեղագիտական կենտրոն, վերակառուցված զբոսայգի և այլ նախագծեր:

Դիտարկելով քաղաքային տարածության ստեղծագործական փոխակերպման նախաձեռնողների նախագծերն ու ինքնատիպ լուծումները, միանշանակ կարող ենք ասել, որ խորհրդային տարիների Իջևանի զարգացման հեռանկարը իսկապես թռիչքաձև էր: Կուսակցական և քաղաքային իշխանությունները փորձեցին հնարավոր լուծումների և միջոցների շրջանակում ձևավորել այն քաղաքային միջավայրը, որ թույլ կտար զարգացնելու և ներդաշնակելու սեփական քաղաքացիների կյանքն ու կենցաղը: Չնայած առկա ռեսուրսներին ու հնարավորություններին, քաղաքային տարածությունը մշակութային փոխակերպման ենթարկելու ձգտումը՝ 1988 թվականին սկսված Ղարաբաղյան շարժումը, չարաքաստիկ Սպիտակի երկրաշարժը, հետագայում հայ-ադրբեջանական բախումները, Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացը, Արցախյան պատերազմն ընդհատեցին Իջևանի զարգացման պլանի իրագործումը: 1988 թվականից սկսած քաղաքաշինական և ճարտարապետական համամասնության ձևավորման առաջնակարգ խնդիրը սկսված նախագծերին ավարտուն տեսք հաղորդելն էր, որը, սակայն, չհաջողեց: Տնտեսական շրջափակումը, սեփականաշնորհման «վայրի» գործընթացը հանգեցրին քաղաքային տարածության մասնատման ու «անհատականացման», որի արդյունքում քաղաքային տարածության զարգացման ընթացքը կրեց հատվածային, տնտեսական և առևտրային ուղղորդման բնույթ՝ երկրորդացնելով մշակութային և ժամանցային բաղադրիչները:

Քաղաքային տարածության փոխակերպումները հետխորհրդային շրջանում: Անկախության առաջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը ենթարկվեց ոչ միայն արտաքին ագրեսիայի, շրջափակման, էներգետիկ և հումանիտար ճգնաժամի, այլև թղթին մնացին քաղաքաշինական բազմաթիվ նախագծեր, անավարտ մնացին արտադրական և արդյունաբերական նշանակության օբյեկտներ, տնտեսության արդյունաբերական և արտադրական համալիրներ դադարեցրին արտադրությունը: Արտաքին և ներքին հանգամանքներով պայմանավորված դադարեցվեցին կամ օպերատիվ բնույթ ստացան քաղաքային տարածության ընդլայնման նախագծերն ու ձեռնարկումները: Իջևանը, որպես շրջանային և հանրապետական նշանակության քաղաք, իր վրա ուղղակիորեն կրեց քաղաքական և տնտեսական փոփոխությունների ազդեցությունը: Այն արտադրական համալիրներն ու արդյունաբերական միավորները, որոնք հանդիսանում էին քաղաքի բնակչության զբաղվածության հիմնական ձեռնարկությունները, դադարեցրին կամ մասնակի դարձրին արտադրական հնարավորությունները:

Ըստ վիճակագրական տվյալների՝ անկախացման առաջին տասնամյակում շինարարությունը շեշտակիորեն նվազեց և 2001 թ. այն կազմում էր 1991 թ. ծավալների միայն մեկ տասներորդը [Վերմիշյան, Բալասանյան, 2015, 82]: Քաղաքաշինական նախագծերի դադարեցումը և որոշ դեպքերում անավարտությունը դարձան անկախության քաղաքային միջավայրի երկարաժամկետ ուղեկից, երբ խորհրդային վերջին տարիների անավարտ, կիսակառույց շենքերն ու համալիրները

միայն 2000-ականների սկզբից սկսած հնարավոր եղավ վերաբաշխել և մասնավորեցնել՝ հաճախ թույլ տալով քաղաքաշինական լրջագույն սխալներ՝ խաթարելով ձևավորված քաղաքային տարածության համաչափությունն ու ներդաշնակությունը: Քաղաքը և քաղաքային տարածությունը ևս սկսեց որոշակիորեն աղապտացվել, իր գործառության կերպափոխումները զուգորդելով «քաղաքական և հասարակական իրավիճակին՝ աստիճանաբար փոխելով նաև իր մշակութային կերպարը» [Թադևոսյան, 2009, 110]:

Արտադրական և բնակելի տարածության սեփականաշնորհման «վայրի» գործընթացն իր ազդեցությունն ունեցավ Իջևանի քաղաքային տարածության աղավաղման վրա: Սեփականության իրավունքի շրջանակներում կառուցապատվեցին քաղաքային կենտրոնը, շուկայամերձ և գետափնյա փողոցները, որտեղ կառուցման անկանոն, անհամաչափ ընթացքը հանգեցրեց գետկանաչ գոտի-փողոց ներդաշնակ եռամիասնության երկրորդացմանը: Ինչպես նշում են որոշ հետազոտողներ՝ ժամանակակից Իջևանի քաղաքային տարածության համաչափությունից երկրորդացվել են մշակութայինն ու ժամանցայինը՝ իրենց տեղը զիջելով առևտրային և կոմերցիոն նշանակության օբյեկտներին [Թադևոսյան, 2009, 111]:

Ժամանակակից Իջևանի քաղաքային տարածության մաս կազմող մշակութային և ժամանցային նշանակության օբյեկտներն արդի ժամանակաշրջանում կորցրել են իրենց մշակութային և հասարակական ընդհանուրի միավորման նշանակությունը և հանդիսանում են տարիքային լոկալ խմբերի սպասարկման-գրադուննքի կենտրոններ (մշակույթի տուն, կինոթատրոն, շախմատի տուն, արվեստի դպրոց, համայնքային գրադարան և այլն):

Ինչ վերաբերում է քաղաքային տարածության մաս կազմող արտադրական և արդյունաբերական համալիրներին, ապա վերջիններիս արտադրական հնարավորություններն ու նյութական ռեսուրսները գործադրվեցին սահմանային անվտանգային խնդիրների լուծման, նորանկախ հանրապետության անվտանգության ապահովման գործին: Սակայն անկախության երեսնամյա ընթացքում դրանց մեծամասնությունը ոչ միայն դադարեցրեց գործունեությունը, այլև արտադրատարածքի առանձին հատվածներ սկսեցին օգտագործվել այլ նպատակներով (Փայտամշակման գործարան-հյուրանոց-ռեստորան-շինարարական խանութ, Իջևանի մեխանիկա-վերանորոգման գործարան-ԻնտերԻջևան հանգույց և այլն): Այս արտադրական տարածքների ապագան անորոշ է (բոլոր հետխորհրդային երկրներում) [Jigoria-Oprea, Popa, 2017, 2719-2738], քանի որ վերօգտագործման հեռանկարն ու տեխնոլոգիական արդիականացման ներդրումային առաջարկների բացակայությամբ պայմանավորված սեփականատերերը դետալացված վաճառում են գույքն ու արտադրական տարածքները:

Հուսադրելի է այն հանգամանքը, որ Իջևան բազմաբնակավայր համայնքի «Մշակութային զարգացման ռազմավարություն 2022-2026 թթ.» մեջ դիտարկված է «համայնքի հարուստ պատմական և մշակութային ժառանգության պահպանության խնդիրը», որի կենսունակության ապահովման լավագույն միջոցը քաղաքային տարածության ներդաշնակ, համաչափ զարգացման ապահովումն է, որի արդյունքում իրական կլինի «սեփականության զգացումը առկա և ստեղծվելիք նյութական և ոչ նյութական արժեքների նկատմամբ» [Իջևան բազմաբնակավայր համայնքի «Մշակութային զարգացման ռազմավարություն 2022-2026 թթ.»]:

Եզրակացությունները: Ի մի բերելով վերոգրյալը՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

- Քաղաքը և քաղաքային տարածությունը հանդես է գալիս ոչ միայն որպես ֆիզիկական,

Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով

տարածական և աշխարհագրական միջավայր, այլև սոցիալ-մշակութային յուրօրինակ աշխատարան: Քաղաքային տարածության ձևավորման իջևանյան մոդելի ուսումնասիրության արդյունքում հստակեցվում է խորհրդային շրջանում քաղաքաշինության և քաղաքային տարածության ձևավորման հիմնական օրինաչափությունները, աճող տնտեսության և հասարակական պահանջներին բավարարող քաղաքային մոդելի ձևավորումը: Գյուղական Իջևանի անցումը դեպի քաղաքային ունեցել է շեշտված գաղափարական բնույթ՝ փոխակերպելով ավանդական համակեցական միջավայրը նոր գաղափարախոսությանը և արժեքներին համահունչ: Բնակավայրի առաջին հատակագծային նախագծով ձևավորվեց ուղղաձիգ, լանդաշաֆտին համապատասխան փողոցներ, հրապարակներ, ժամանցի և մշակութային միջավայրն ապահովող տարածական միավորներ: Հատկապես 1960-ականներին, Իջևանի բնակչության արագ աճին զուգընթաց, անհրաժեշտություն առաջացավ նոր հատակագծի, որի լուծումներն ու քաղաքային տարածության ծավալման հիմնախնդիրները դրված էին շրջանային և հանրապետական գիտափորձարարական կենտրոնների նախագծային խմբերի վրա, որոնց իրականացրած և նախատեսած նախագծերը հաճախ ունեին ուտոպիստական բնույթ:

- Խորհրդային քաղաքային տարածության ձևավորման փորձառության իջևանյան օրինակի զարգացման հնարավորություններն ընդհատվեցին 1988 թվականից սկսած, երբ Հանրապետության ներքին և արտաքին մարտահրավերներով պայմանավորված առաջնակարգ դարձավ անվտանգության, սահմանային կայունության ապահովումն ու ճգնաժամի հաղթահարումը: 1990-ական թվականներից սկսած, ինչպես Հանրապետության այլ քաղաքային համայնքներում, Իջևանում ևս շինարակական, քաղաքաշինական նախագծեր չիրականացվեցին, իսկ անավարտ շինությունները դարձան նախորդ քաղաքաշինական ձգտումների քարեղեն «վկայություններ»: Մեփականաշնորհման գործընթացն էլ ուղղակիորեն խաթարեց քաղաքային տարածության ներդաշնակությունն ու համաչափությունը՝ նոր արժեքներ և առաջնահերթությունները սահմանելով քաղաքային միջավայրում: Միով բանի՝ նմանօրինակ փորձառության հաղթահարման համար անհրաժեշտ է ձևավորել քաղաքային տարածության զարգացման, կառավարման համայնքային ռազմավարություն, որի հեռանկարում կհստակեցվեն քաղաքային տարածության փոխակերպման հնարավոր միտումները, մշակութային և հասարակական ներդաշնակ միջավայրի շարունակականության ապահովումը:

Գրականության ցանկ

Բարսյան Ե., Այսպիսին կլինի Իջևանը, Լենինյան ուղիով, 28.XI.1968, էջ 2:

Գևորգյան Վ., Իջևանը այժմ և նախագծերում, Լենինյան ուղիով, 1967, 9.VI.1967, էջ 3:

Զարգարյան Հ., Օրակարգում քաղաքի ապագայի հարցն էր, Լենինյան ուղիով, 6.VI.1968, էջ 3:

Զարգարյան Հ., Կառուցապատվում է քաղաքը. հարցազրույց քաղաքի գլխավոր ճարտարապետ Յու Բրեժնևի հետ, Լենինյան ուղիով, 29.XI.1986, էջ 2:

Էլլարյան Բ., Ապագային ժպտացող քաղաքը, Լենինյան ուղիով, 24.II.1965, էջ 3:

Թադևոսյան Ա. 2009, Իջևան քաղաքի կենտրոնի մշակութաբանական վերակազմավորումը և դրա հիմնախնդիրները հետխորհրդային շրջանում, Տավուշ. հոգևոր և նյութական ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, էջ 110-114:

Իջևան բազմաբնակավայր համայնքի «Մշակութային զարգացման ռազմավարություն 2022-2026թթ.», <http://surl.li/fugyqn> (շղված 23.05.2024)

Խաչատրյան Մ. 1994, Ակունք. Հուշեր-խոհազրույցներ, Երևան, Աղվանք հրատ., 148 էջ:

Խորհրդային Հայաստան, 30.XII.1923, 4 էջ:

Խորհրդային Հայաստան, 17.II.1926, 4 էջ:

Խորհրդային Հայաստան, 14.VI.1922, 4 էջ:

Կայսերականի և հետկայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները XX դարում 2023 / Յ. Անտոնյան, Հ. Մուրադյան, Լ. Գաբրիելյան, Ա. Սաֆարյան, Երևան, ԵՊՀ հրատ., 276 էջ:

Ճաղարյան Խ., Վերածնունդ, Լենինյան ուղիով, 28.XI.1967, էջ 2:

Պողոսյան Վ., Մկրտումյան Ա. 2022, Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-1930-ական թվականներին, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, N 9, էջ 257-271:

Սուքիասյան Հ. 2023, Հոգևորականների դրությունը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին, Խորհրդահայ մշակույթ. կոնցեպտը, ընկալումներն ու դրսևորումները: Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 273-284:

Վերմիշյան Հ., Բալասանյան Մ. 2015, Լոկալ ինքնությունները Երևանում: Քաղաքային տարածության կառուցվածքները, Երևան, ԵՊՀ հրատ., 158 էջ:

Аванесов С. С. 2018, Сакральная топика русского города. Собор и ворота // ПРАЭНМА. Проблемы визуальной семиотики, № 1 (14), стр. 70-92.

Аванесов С. С., Федотова Н. Г. 2022, Город: в поисках идентичности / С. С. Аванесов, Н. Г. Федотова. СПб.: Алетея, 408 стр.

Баканов С. А. 2007, Советский индустриальный город 1920-1950-х годов и культурологический поворот в исторической урбанистике // Вестник Челябинского государственного университета, №3 (81), стр. 123-126.

Бойм С. 2002, Общие места: Мифология повседневной жизни. Москва, Новое литературное обозрение, 310 стр.

Лотман Ю. М. 2000, Семиосфера. С.-Петербург: «Искусство-СПБ», 704 стр.

Лотман Ю. М. 1984. Символика Петербурга и проблемы семиотики города // Ученые записки Тартуского государственного университета. Вып. 664. Тарту, стр. 30-45.

Иконников А. В. 2006, Пространство и форма в архитектуре и градостроительстве. Москва, 352 стр.

СССР: Жизнь после смерти 2012 / под ред. И. В. Глущенко, Б. Ю. Кагарлицкого, В. А. Куренного; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». - М.: Изд. дом Высшей школы экономики, 304 с.

Эллард К. 2015, Среда обитания: Как архитектура влияет на наше поведение и самочувствие (Places of the Heart: The Psychogeography of Everyday Life), «Альпина Диджитал», стр. 102-103.

Aldo Rossi - The Architecture of the city, <https://www.libfox.ru/641005-4-aldo-rossi-arhitektura-goroda.html#book> (չդված է 18.05.2024)

Chauncey, D.H. (1970), Cities of the Soviet Union, Chicago: Rand McNally and Co, 484 p.

Jigoria-Oprea, L., & Popa, N. (2017). Industrial brownfields: An unsolved problem in post-socialist cities. A comparison between two mono industrial cities: Reșița (Romania) and Pančevo (Serbia). Urban Studies, 54(12), 2719-2738.

Morton, H.W, & Stuart, R.C. (eds) (1984), The Contemporary Soviet City, London: Macmillan, 276 p.

Pallot J. & Shaw, D. (1981), Planning in the Soviet Union, London: Croom Helm, 320 p.